ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՏՕՆ

Կիրակի, 28 Ապրիլ, 1968, մասնաւոր պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Տաճարին մէջ՝ Առաջին Համաշխարհային Պատերազմի մեր մէկուկէս միլիոն նահատակներուն համար։ Պատարագէն ետք, Միաբանութիւնը, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ասլանեանի, թափօրով և հաւատացեալներու խուռն բազմութեամբ ուղղուեցաւ Ս. Փրկչի Ազգային Գերեզմանատուն, ուր 20 տարիներու մէջ առաջին անգամ ըլլալով, հոգեհանգստեան պաշտօն մատուցուեցաւ Արարայի հերոսներու Յուշարձանին առջեւ, և ուր կուռ քարոզ մը խօսեցաւ Լուսարարապետ Գերշ. Ս. Հայրը։

Ճեմարանի սրահին մէջ, երեկոյեան ժամը 8-ին, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի կողմէ կազմակերպուած Յուշատօնին նախագահեց Ամեն. Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան Պատրիարք Ս. Հայրը։ Գործադրուեցաւ պատշաճ և ճոխ յայտագիր մը. բանախօսեց Պրն. Արայ Գալայճեան, և փակման խօսքը ըրաւ Ն. Ամենապատուութիւնը՝ որ ապա հանդիսականները օրհնեց «Պահպանիչ»-ով։

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 199):

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐՈՒ

27 Յուլիս 1968, Շաբաթ առաւօտ, ձեռնադրութիւնն էր վեց Սարկաւագներու, անոնց՝ որոնք իրենց ուսերը պատրաստած էին ընդունելու լուծը, «մաքուր և սուրբ ուրար»-ով խորհրդանշուած։

Ժառանգաւորաց չորս տարիները աւարտած և Ընծայարան ընդունուած վեց ուխտեալներ՝ Վարդան Սրկ. Տատուրեան, Պօղոս Սրկ. Մանուկեան (Պատրիարք Սրբազան), Մանուկ Սրկ. Մուրատեան (Գիսակ Արք. Մուրատեան), Օննիկ Սրկ. Այքազեան (Վիգէն Արք. Այքազեան), Սարգիս Սրկ. Պարսամեան (Խաժակ Արք. Պարսամեան) և Շահան Սրկ. Քէօսէեան, որոնք պաշտօն առին Աւետարանի խօսքով և խունկի անուշահոտութեամբ լեցնելու Աստուծոյ Եկեղեցին։

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Յուլիս-Օգոստոս, Թիւ 7-8, Էջ 310):

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՐՕՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

28 Յուլիս, 1968-ին, Վարդավառի Կիրակիին կատարուեցաւ Կուսակրօն քահանայից ձեռնադրութիւն, ձեռամբ Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին, խարտաւիլակութեամբ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ասլանեանի, առընթերակայ ունենալով Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետ Գաբիկեանը և Հոգշ. Տ. Արշէն Աբեղայ Այուազեանը։

Ճաշու Գիրքի ընթերցումէն առաջ, չորս ընծայեալները առաջնորդուեցան Ս. Խորանին առջեւ, և սկսան երգուիլ քահանայական ձեռնադրութեան հոգեզմայլ շարականները. «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ...» և չորս կոչեցեալները ծնրադիր բեմ բարձրացան Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետի և Հոգշ. Տ. Արշէն Աբեղայի

առաջնորդութեամբ և բերուեցան Պատրիարք Սրբազանին դիմաց։

«Աստուածային և Երկնային շնորհ»-ը սկսաւ իջնել անոնց վրայ, երբ, դարձած ժողովուրդին, ծնրադիր, ձեռքերնին բարձրացուցին ի նշան հրաժարումի և անոնց դէմքերը այլակերպուած գեղեցկութեամբ ցոլացուցին խորերէն բարձրացող գի-տակցութիւնը կոչումին։ Կը հրաժարէին այլեւս աշխարհէն, կոչուելու համար «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն Ս. Եկեղեցւոյ» և այդ՝ «ըստ վկայութեան անձանց իւրեանց»։

Դպիրներ միաբերան երիցս «Արժանի են» կը ձայնեն, մինչ նորընծաները կը բոլորին Պատրիարք Ս. Հօր առջեւ, որ իր ձեռքերը խաչաձեւ իւրաքանչիւրի գլխուն դնելով կ՚աղօթէ. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթք արարէք զի արժանի լինիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»։

Պատարագը կը շարունակուի հանդիսաւոր և հոգեզմայլ մթնոլորտի մը մէջ, երբ, «Ողջոյն»-էն առաջ, չորս նորընծաները կը ծնրադրեն Պատրիարք Ս. Հօր առջեւ՝ ընդունելու համար քահանայական սեւ փիլոնները իրենց ուսերուն։ Ապա, իբր «պատմուճան ուրախութեան և հանդերձ փառաց» անոնց կը շնորհուին եկեղեցական միւս զգեստները՝ սաղաւարտ, փորուրար, գօտի, շուրջառ եւայլն, որոնցմով կը զգեստաւորուին քաշուած վարագոյրին ետին, մինչ դպիրներ կ՚եղանակեն «Խորհուրդ խորին»-ը։ Երբ վարագոյրը կը բացուի, անոնք ա՛լ պատրաստ են իրենց ճակատներուն վրայ ընդունելու Ս. Օծման սրբալոյս Միւռոնը։

«Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողութենէն ետք, որ ազդարար կանչն է Ս. Հոգիի իջման, ձեռնադրիչ Ամենապատիւ Սրբազանը, խորին լռութեան մը մէջ սրբալոյս Միւռոնով կ՚օծէ նորընծաներէն իւրաքանչիւրին ճակատն ու ձեռքերը, վերակոչելով զանոնք իրենց նոր անուններով։ Այսպէս, Եղիա Սարկաւագ կը վերակոչուի Տէր Աղան, Յարութիւն Սարկաւագ՝ Տէր Սիփան, Մանուէլ Սարկաւագ՝ Տէր Նարեկ և Յովհաննէս Սարկաւագ՝ Տէր Սեւան։ Ապա, կարճ աղօթքէ մը վերջ, Ամենապատիւ Սրբազանը Սուրբ Սկիհը կը փոխանցէ անոնց՝ շնորհելով իշխանութիւն Ս. Պատարագ կատարելու։

Նոյն օրը, երեկոյեան ժամերգութենէն վերջ, Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը կը կատարէ վեղարի օրհնութեան և տուչութեան արարողութիւնը, որ ամբողջութեամբ կը բաղկանայ Ս. Գրոց ընթերցումներէ և քանի մը մեծ աղօթքներէ։ Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը վերջին կարճ աղօթքով մը կը վերցնէ նորընծաներու գլուխէն սարկաւագական ջբրունը և կու տայ վեղարը։ Ապա Նորին Ամենապատուութեան «Պահպանիչ»-էն ետք, նորընծաները Պատրիարքարան կ՚առաջնորդուին։

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Յուլիս-Օգոստոս, Թիւ 7-8, Էջ 312-317):